

## Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

### ԼՂՀ ֆինանսների նախարարության ՖՎ վարչության 2010թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության վարչության կողմից 2010թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 108 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 15 բյուջետային հիմնարկում, 47 պետական ոչ առևտրային կազմակերպությունում, 17 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում, 6 ոչ պետական ձեռնարկություններում, 5 հասարակական կազմակերպություններում, 1 հիմնադրամում, 5 քաղաքային և 12 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 218172.8 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 1728.2 հազ.դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ, ծախսեր՝ 10347.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 5048.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1338.3 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 3960.1 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 1638.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 618.6 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 216.2 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 803.2 հազ.դրամ,
- ավել նախատեսված գումարներ՝ 15871.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 13858.6 հազ.դրամ, պակասացնել ֆինանսավորումից՝ 2012.5 հազ.դրամ,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 576.2 հազ.դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 60682.6 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 60151.4 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 152.9 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 378.3 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 12031.8 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 10918.1 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպման՝ 1113.7 հազ.դրամ,

- գերաձախս՝ 15791.3 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 4227.9 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 112.5 հազ.դրամ, ենթակա է հաշվառումով վերաձևակերպման՝ 11450.9 հազ.դրամ,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 27976.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 10991.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 25.1 հազ.դրամ, պակասացնել ֆինանսավորումից՝ 389.2 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա՝ 16570.6 հազ.դրամ,
- ավելցուկ՝ 14233.1 հազ.դրամ,
- պակասորդ՝ 57297.3 հազ.դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 103061.4 հազ.դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են՝ 4481.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1845.0 հազ.դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա գումարները՝ 2401.7 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 34853.0 հազ.դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները կազմել են 57297.3 հազ.դրամ, որից 6 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում կազմել են 56743.0 հազ.դրամ, 4 պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 189.9 հազ.դրամ, 1 քաղաքային համայնքում՝ 30.2 հազ.դրամ, 3 գյուղական համայնքում՝ 334.2 հազ.դրամ:

Ավելցուկը կազմել է 14233.1 հազ.դրամ, որից՝ 13 պետական ոչ առևտրային կազմակերպությունում 9179.3 հազ.դրամ, 6 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունում 2201.2 հազ.դրամ, 1 քաղաքային համայնքում՝ 1962.2 հազ.դրամ, 6 գյուղական համայնքում՝ 890.4 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 218172.8 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 40668.2 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 20853.3 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 3655.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 60000.6 հազ.դրամ, պակասեցվել է ֆինանսավորումից՝ 389.2 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 2395.7 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 177504.6 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեիին՝ 82208.1 հազ.դրամ, համայնքային բյուջեիին՝ 826.1 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 60000.6 հազ.դրամ, ֆինանսավորումից պակասեցման ենթակա՝ 2012.5 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա՝ 32457.3 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում «Տոհմային կայան» ՓԲԸ, Քաշաթաղի շրջ. վարչակազմի կրթության բաժնի, «Քաշաթաղի շրջ. բուժմիավորում» ՊՈԱԿ,

Բերձորի քաղաքային համայնքի, Շահումյանի շրջանի կրթության բաժնի և 2010թ. IV եռամսյակի վերջում հայտնաբերված գումարների ապառքն են:

Նախորդ՝ 2009թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2010թ. վերականգնվել/վերաձևակերպվել է 29631.6 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 26535.8 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 235.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 2860.0 հազ.դրամ:

Ընդամենը 2010թ. պետական բյուջե է վերականգնվել 47389.1 հազ.դրամ, որից 2010թ. արդյունքներով 20853.3 հազ.դրամ, 2009թ. ապառքի գումարներից 26535.8 հազ.դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 3891.0 հազ.դրամ, որից՝ 2010թ. արդյունքներով՝ 3655.2 հազ.դրամ, 2009թ. արդյունքներով 235.8 հազ.դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 16234.8 հազ.դրամ, որից 2010թ. արդյունքներով 13374.8 հազ.դրամ, 2009թ. ապառքի գումարներից 2860.0 հազ.դրամ: Ֆինանսավորումից պակասեցված գումարը 2010թ. կազմել է՝ 389.2 հազ.դրամ: Հաշվառումով վերաձևակերպված գումարը 2010թ. արդյունքներով կազմել է 2395.7 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով ութ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ ԿԱ ոստիկանություն և երկու հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ Գլխավոր դատախազություն: